ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

ԿԱՐԾԻՔ

Էսթեր Աշոտի Հակոբյանի «Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում » թեմայով Ը.00.02 - ««Տնտեսության, դրա ոլորտերի տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտության գծով տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման ներկայացված ատենախոսության վերաբերյալ:

Ատենախոսությունը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում ստվերային տնտեսության ծավալների գնահատմանը և կրճատման մեխանիզմներին:

Ժամանակակից աշխարհում պետությունների մեծամասնությունը բախվում է ստվերային տնտեսության և նրանից բխող խնդիրների հետ, որոնց ծավալների ճիշտ գնահատումից և լուծման մեթոդներից է կախված պետության տնտեսական քաղաքականության արդյունավետությունը և հաջողությունը:

Ստվերային գործունեությունը պետության վիճակագրությունից և վերահսկումից դուրս գոյություն ունի բոլոր սոցիալական համակարգերում: Ստվերային տնտեսության դեմ պայքարը չի կարող ամբողջությամբ վերացնել, այլ կարող է միայն կրճատել նրա ծավալները: Ստվերային տնտեսությունը, լինելով խնդիր բոլոր պետություններում, առավել վտանգավոր է զարգացող պետությունների համար, որոնց թվին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ հետխորհրդային ժամանակահատվածը շատ արմատական փոփոխություններ է առաջացրել, որի արդյունքում ձևավորվել են ժամանակակից շուկայի բնութագրիչ քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունների նոր համակարգեր: Այս փոփոխությունները ուղղակիորեն անդրադարձել են բոլոր տնտեսվարող սուբյեկտներին, որոնք բախվել են նոր տնտեսական, քաղաքական, իրավական և սոցիալական միջավայրին հարմարվելու լուրջ խնդրի հետ, որը շատ դեպքերում

պահանջում է համապատասխանություն նոր պետության խստապահանջ կանոններին եւ սահմանափակումներին:

Այսօր ստվերային տնտեսության խնդիրները և դրանց մասշտաբների գնահատումը արդիական են Հայաստանի Հանրապետության հետագա զարգացման համար: Անցումային շրջանի առանձնահատկությունների, սոցիալական, քաղաքական և տնտեսական խնդիրների և բազմաթիվ արտաքին գործոնների պատճառով դժվար է որոշել Հայաստանում ստվերային գործունեության իրական ծավալները: Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և նրա կրճատման մեխանիզմները մնում են ՀՀ կառավարության իրականացվող քաղաքականության առաջնահերթություններից:

Չնայած նրան, որ ստվերային տնտեսության հետ պայքարը չափազանց մեծ նշանակություն ունի ՀՀ տնտեսության զարգացման և պետական ինստիտուտների կայացման համար, լինելով ՀՀ-ում տնտեսական քաղաքականության և գիտական շրջանակների կարևորագույն հիմնախնդիրներից մեկը, ստվերային տնտեսության ծավալների հաշվարկումը, գնահատումը, նրա կրճատման համակարգված մեխանիզմների կիրառումը մնում է ՀՀ-ում ամենաքիչ գիտականորեն ուսումնասիրված ոլորտներից մեկը: Հարկ է նշել, որ սույն թեմայով և ուղղվածության ամբողջական գիտական աշխատանքներ շատ քիչ են իրականացվել:

Վերը նշվածի առումով Էսթեր Աշոտի Հակոբյանի ատենախոսության թեմայի՝ «Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» ընտրությունը խիստ արդիական է:

Ատենախոսության նպատակը և խնդիրները.

Ատենախոսության հետազոտության նպատակն է բացահայտել երկրի ստվերային երևույթների բացասական ազդեցությունները երկրի տնտեսության

զարգացման գործընթացում, ինչպես նաև մշակել ՀՀ-ում ստվերային տնտեսության ծավալների նվազեցմանն ուղղված մի շարք առաջարկություններ:

Այդ նպատակի իրագործման համար աշխատանքում դրվել և լուծվել են հետևյալ խնդիրները.

- ✓ վերլուծել «ստվերային տնտեսություն» կատեգորիային առկա տեսական մոտեցումները և իրականացնել դրանց համեմատական վերլուծությունը,
- ✓ համակարգել ստվերային տնտեսության ծավալների որակական և քանակական գնահատման հիմնական մեթոդաբանական սկզբունքները,
- ✓ ուսումնասիրել ստվերային տնտեսության առաջացման նախադրյալները և դրա հետ կապված միջազգային փորձը,
- ✓ բացահայտել ստվերային տնտեսության բնույթը, տեսակները և ձևերը,
- ✓ գնահատել ստվերային տնտեսության հետևանքները սոցիալ-տնտեսական գործընթացներում,
- ✓ ուսումնասիրել ստվերային տնտեսության առանձնահատկությունները և դրանց դրսևորումները ՀՀ-ում,
- ✓ վերլուծել ստվերային տնտեսության պատճառները ՀՀ-ում,
- ✓ սահմանել ստվերային տնտեսության դերը և նշանակությունը ՀՀ-ում,
- ✓ զարգացնել ստվերային տնտեսության մակարդակի կրճատման ուղիները, ինչպես նաև ներկայացնել Հայաստանում դրա ծավալների նվազեցմանն ուղղված մեխանիզմների մի շարք առաջարկություններ:

Հիմնական գիտական արդյունքները և հետազոտության նորույթը

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթ պարունակող ամենակարևոր արդյունքները հետևյալն են՝

1. Սահմանվում են «ստվերային տնտեսության էֆեկտների» վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնները և առաջարկվում է գործարար միջավայրի վրա բացասական ազդեցությունը կարգավորող մոտեցում:

2. Հայաստանի Հանրապետության ստվերային տնտեսության ծավալները գնահատվում են Տանզիի մեթոդի կիրառմամբ, որը հիմնված է ազգային արժույթի պահանջարկի էկոնոմետրիկ մոդելի վրա: Հաշվարկվել է ազգային արժույթի ավելցուկային պահանջարկը, որը հաշվարկվում է որպես գնահատված դրամական պահանջարկի և զրոյական հարկերի դեպքում դրամական պահանջարկի միջև տարբերություն:

3. Հաշվարկվել է ստվերային տնտեսության հետևանքով պետական բյուջեի չստացված հարկային եկամուտների ծավալը: Կատարվել է Տանզիի և Գուտմանի մեթոդով ստացված ցուցանիշների համեմատական վերլուծությունը:

4. Բացահայտվում է ստվերային տնտեսության առաջացման վրա ազդող գործոնների համակարգը, արվել են ստվերային տնտեսության դեմ պայքարի նոր օրենսդրական և ինստիտուցիոնալ առաջարկներ:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունան մեջ հիմնավորված է ատենախոսության թեմայի արդիականությունը, ձևակերպված են ուսումնասիրության նպատակը և հիմնական խնդիրները, սահմանված են աշխատանքի արդյունքների գիտական նորույթը ու գործնական նշանակությունը, ինչպես նաև եզրակացությունները և առաջարկները:

Ատենախոսության առաջին «Ստվերային տնտեսության կատեգորիայի տեսական մոտեցումներ» գլխում ներկայացվել են ստվերային տնտեսության կառուցակարգը, դասակարգումը, տեսակները և հիմնական առանձնահատկությունները: Գիտական գրականության մեջ արտացոլված հիմնական մոտեցումները: Տրվում է տվյալ մոտեցումների մանրամասն վերլուծություն: Ուսումնասիրվում են ստվերային տնտեսության զարգացմանը բերող

գլխավոր նախադրյալները: Դուրս են բերվում ստվերային տնտեսության էֆեկտների վրա առավել մեծ ազդեցություն ունեցող գործոնները:

Ատենախոսության երկրորդ՝ «Եվրոպական երկրներում ստվերային տնտեսության հետ պայքարի փորձը» գլխում ներկայացվել են եվրոպական տարբեր երկրներում ստվերային տնտեսության ծավալները, պայքարի մեխանիզմները և ստացված արդյունքները: Ուսումնասիրվել են այն ոլորտները, որտեղ առավել հաճախ հանդիպում են ստվերային տնտեսության դրսևորումները: Կատարվել է համեմատական վերլուծություն տարբեր երկրներում ստվերային տնտեսության ծավալների ըստ ոլորտների: Ուսումնասիրվել են 2014թ. համաշխարային տնտեսական ճգնաժամի ազդեցությունը ստվերային տնտեսության ծավալների փոփոխության վրա եվրոպական մի շարք երկրներում:

Ատենախոսության երրորդ՝ «Ստվերային տնտեսությունը ՀՀ-ում» գլխում ներկայացվել է ստվերային տնտեսության ծավալների հաշվարկման և գնահատման տարբեր մեթոդներ, իրականացվել է ստածված արդունքների համեմատական վերլուծություն, կատարվել են ստվերային տնտեսության ծավալների հաշվարկները ՀՀ-ում ըստ տարիների: Հաշվարկվել է պետական բյուջեի վնասները ստվերային տնտեսությունից չստացած հարկերի պատճառով: Կառուցվել են էկոնոմետրիկ մոդելներ, որոնք դուրս բերեցին ՀՀ-ում ստվերային տնտեսության վրա հիմնական ազդեցություն ունեցող գործոնները:

Դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Աշխատանքը զերծ չէ նաև թերություններից: Նշենք դրանցից մի քանիսը.

1. Ատենախոսության առաջին գլխի 1.2 և 1.3 ենթագլուխներում հեղինակի կողմից հանգամանալից վերլուծվել են ստվերային տնտեսության դրական և բացասական էֆեկտները և դրանց վրա առավելագույն ազդեցություն ունեցող գործոնները, սակայն գործարար միջավայրի վրա դրանց բացասական ազդեցության

կարգավորման մասով արված առաջարկությունները ընդհանրական բնույթ են կրում և մեր կարծիքով չեն կարող համարվել գիտական նորույթ ինչպես նշել է հեղինակը Ատենախոսության «Ներածության» բաժնի «Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը» ենթաբաժնի 1 կետով:

2. Ատենախոսության 3.1 ենթագլխում հեղինակի կողմից ներկայացվել է ՀՀ ստվերային տնտեսության ծավալների հաշվարկման պաշտոնական արդյունքները և սեփական հաշվարկները, սակայն դրանց համեմատական վերլուծության բացակայության պատճառով այնպես էլ պարզ չէ, արդյոք հեղինակը ժխտում է թե համաձայնվում է ստվերային տնտեսության ծավալների պաշտոնական տվյալների հետ:

3. Կարծում ենք աշխատանքն ավելի կշահեր, եթե հեղինակի կողմից ՀՀ ստվերային տնտեսության գնահատումը իրականացվեր նաև ըստ տնտեսության ոլորտների, ինչպես դա ներկայացված է ՀՀ ԱՎԾ հաշվետվությունում: Այդ վերլուծությունը թույլ կտար հեղինակին ավելի նպատակային առաջարկություններ ներկայացնել ՀՀ-ում ստվերային գործունեության նվազման ուղղությամբ:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, հարկ է եզրահանգել, որ ատենախոսությունն իրենից ներկայացնում է ամբողջական հետազոտական աշխատանք, վերը նշված դիտողությունները բնավ չեն նսեմացնում ներկայացված աշխատանքի արժեքը և կարող են հաշվի առնվել հեղինակի կողմից հետագա ուսումնասիրությունների ժամանակ: Աշխատանքում օգտագործված տեսական և գործնական մոտեցումները, ինչպես նաև ուսումնասիրության ընթացքում ստացված արդյունքները, գիտականորեն հիմնավորված, համոզիչ և ընդունելի են:

Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է աշխատանքի բովանդակությանը և իր մեջ ներառում է հիմնական արդյունքները:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի վեց գիտական հրապարակումներում:

Էսթեր Հակոբյանի «Ստվերային տնտեսության ծավալների գնահատումը և կրճատման մեխանիզմները Հայաստանի Հանրապետությունում» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է ԲՈՀ-ի կողմից թեկնածուական ատենախոսության համար ներկայացված պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.02 – «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Տ.Ս. Մարտիրոսյան

Տ.Ս. Մարտիրոսյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Եվրոպական Համալսարանի գիտական քարտուղար,
աշխ.գ.թ. դոցենտ
Գ.Ս.Ստեփանյան

11.06.2020թ.